European Commission against Racism and Intolerance
Commission européenne contre le racisme et l'intolérance

CRI(2001)1
Version arménienne
Armenian version

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով

ECRI-ի ընդհանուր քաղաքական n 6 հանձնարարական

Պայքար ինտերնետի միջոցով ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի նյութերի տարածման դեմ

Ընդունվել է 2000 թ. դեկտեմբերի 15-ին

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Secretariat of ECRI
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F - 67075 STRASBOURG Cedex
Tel.: +33 (0) 3 88 41 29 64
Fax: +33 (0) 3 88 41 39 87
E-mail: combat.racism@coe.int

Այցելեք ձեր վեբ սայթը . www.ecri.coe.int

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների 1993 թ. հոկտեմբերի 8- ից 9-ը Վիեննայում տեղի ունեցած գագաթնաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարների ընդունած Հռչակագրին,

Հիշեցնելով, որ այդ Հռչակագրի շրջանակներում սահմանված ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի գործողությունների ծրագիրը կոչ է անում Նախարարների կոմիտեին ստեղծել Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, որը լիազորված լինի մասնավորապես անդամ պետություններին ուղղված ընդհանուր քաղաքական բնույթի հանձնարարականներ մշակել,

Անդրադառնալով նաև 1997 թ. հոկտեմբերի 10-ից 11-ը Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ու կառավարությունների ղեկավարների Ստրասբուրգում տեղի ունեցած երկրորդ գագաթնաժողովի ընթացքում ընդունված Եզրափակիչ հռչակագրին և Գործողությունների պլանին,

Անդրադառնալով Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածին,

Անդրադառնալով Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված ռասիստական բովանդակությամբ տեսախաղերի վերաբերյալ N R(92)19 և Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված »ատելություն պարունակող ելույթների« վերաբերյալ N R(97)20 հանձնարարականներին,

Անդրադառնալով ECRI-ի N 1 ընդհանուր քաղաքական հանձնարարականին, որով նա Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կառավարություններին կոչ է անում անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, որպեսզի ներպետական քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի միջոցով հստակ և հատուկ կերպով պայքար մղվի ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ,

Ընդգծելով, որ վերոհիշյալ հանձնարարականում ECRI-ն պահանջում է, որպեսզի հիշատակված միջոցառումները մասնավորապես նախատեսեն, որ բանավոր, գրավոր, լսատեսական և այլ միջոցները, այդ թվում նաև էլեկտրոնային լրատվամիջոցներով անցնող այն հաղորդագրությունները, որոնք ատելություն, խտրականություն կամ բռնություն են սերմանում ռասսայական, էթնիկական, ազգային կամ կրոնական խմբերի կամ նրանց անդամների նկատմամբ՝ տվյալ խմբին նրանց պատկանելու պատճառով, իրավաբանորեն համարվում են քրեական իրավախախտում, որը վերաբերում է նաև նշված նյութերի արտադրությանը, տարածմանը և տարածման նպատակով պահպանմանը,

Լիովին հաշվի առնելով 2000 թ. հոկտեմբերի 11-ից 13-ին Ստրասբուրգում տեղի ունեցած Ռասիզմի դեմ եվրոպական համաժողովի ընդհանուր եզրակացությունները, դրանք դիտարկելով որպես 2001 թ. օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 7-ը Հարավաֆրիկյան հանրապետության Դուրբան քաղաքում Ռասիզմի, ռասսայական խտրականության, օտարատյացության և անհանդուրժողականության դեմ կայանալիք համաշխարհային համաժողովին եվրոպական տարածաշրջանի բերած նպաստը,

Նշելով, որ Ռասիզմի դեմ եվրոպական համաժողովը դիմել է մասնակից պետություններին՝ անելու հնարավոր ամեն բան՝ ինտերնետի միջոցով ռասսայական ատելություն քարոզող անձանց և նրանց համախոհներին հետապնդելու նպատակով,

Գոհունակությամբ նշելով, որ 2000 թ. հոկտեմբերի 13-ին Ռասիզմի դեմ եվրոպական համաժողովի եզրափակիչ նիստում ընդունած քաղաքական հռչակագրով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պարտավորվում են պայքարել ռասսայական ատելություն սերմանող ցանկացած խոսքի դեմ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել լրատվամիջոցներում ընդհանրապես և ինտերնետով մասնավորապես ռասսայական բնույթի նյութերի տարածման դեմ,

Հաշվի առնելով այս ոլորտում ՄԱԿ-ի, Համագործակցության և տնտեսական զարգացման կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության գործողություններն ու նախաձեռնությունները,

Ողջունելով Եվրոպայի խորհրդի արձանագրած հաջողությունները կիբեր-հանցավորության դեմ պայքարի բնագավառում, մասնավորապես կիբեր-հանցավորության մասին կոնվենցիայի նախագծի վրա կատարվող աշխատանքները, հույս հայտնելով, որ կիբեր-հանցավորության դեմ պայքարի այս առաջին միջազգային փաստաթղթի մշակումն արագ կհասցվի ավարտի,

Այնուամենայնիվ ափսոսանք արտահայտելով, որ առայժմ նշված կոնվենցիայի նախագիծը դրույթներ չի պարունակում ինտերնետի միջոցով իրականացված ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական իրավախախտումների վերաբերյալ,

Գիտակցելով, թե ինտերնետն ինչ դրական ավանդ կարող է ունենալ համաշխարհային մասշտաբով ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարելու առումով,

Ընդունելով, որ ինտերնետն աննախադեպ միջոցներ է տրամադրում՝ թույլ տալով խտրականության դեմ պայքարի հետ կապված մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մասին տեղեկատվության հաղորդում սահմաններից անդին,

Ընդգծելով, որ անհրաժեշտ է աջակցել և տարածել ինտերնետի օգտագործումը կրթության ոլորտում՝ կապեր հաստատելու և ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի վրա ուշադրություն բևեռելու համար,

Խորապես անհանգստացած այն հանգամանքով, որ ինտերնետն օգտագործվում է նաև այնպիսի խմբերի և անձանց կողմից, որոնք անհանդուրժողականության և ռասսայական ու էթնիկական ատելություն սերմանելու նպատակով ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի նյութեր են տարածում,

Համոզված, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները լի են վճռականությամբ՝ պայքարելու ժողովրդավարության համար կործանարար այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են ռասիզմը, օտարատյացությունը, հակասեմիտիզմը և անհանդուրժողականությունը, ուստի և պատրաստ են արդյունավետ գործել՝ ինտերնետը ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական նպատակներով օգտագործելու դեմ,

Գիտակցելով, որ ինտերնետի առանձնահատկությունները պարտադրում են միջազգային մակարդակի լուծումներ գտնել, ուստի և ենթադրում են բոլոր պետությունների վճռականությունը՝ մարդկային արժանապատվության հարգանքի հիմնարար սկզբունքի հիման վրա պայքարել ռասսայական ատելության սերմանման դեմ,

հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին.

- ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի դեմ պայքարի խնդիրն ընդգրկել ընթացիկ և ապագա բոլոր միջազգային աշխատանքներում, որոնց նպատակն է պայքարել ինտերնետ ցանցում զետեղված հակաօրինական նյութերի դեմ,

- ինտերնետի միջոցով կատարված ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի իրավախախտումների դեմ պայքարելու նպատակով նախապատրաստել ապագա կիբեր-հանցավորության մասին կոնվենցիայի հատուկ արձանագրություն,

- անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել դատական և ոստիկանական մարմինների միջև միջազգային համագործակցությունը զարգացնելու նպատակով և ապահովել ամենալայն դատական փոխօգնությունը՝ ինտերնետի միջոցով ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի նյութերի տարածման դեմ ավելի արդյունավետ պայքար մղելու համար,

- հավաստիանալ, որ համապատասխան ազգային օրենքները կիրառվում են նաև ինտերնետի միջոցով կատարված ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի իրավախախտումների նկատմամբ և հետապնդման ենթարկել այս տիպի իրավախախտումների մեղավորներին,

- հետևողական ջանքեր գործադրել՝ դատական և ոստիկանական մարմիններին պատրաստելու համար ինտերնետի միջոցով ռասիստական,

օտարատյաց և հակասեմիտական բնույթի նյութերի տարածման հիմնախնդրին,

- քննարկել ներպետական խորհրդակցական մի մարմնի ստեղծման խնդիրը, որը կարող է գործել որպես մշտական դիտորդական մարմին և ծառայել որպես միջնորդ, ինչպես նաև մասնակցել վարքագծի կոնոնների մշակմանը,

- սատարել ինտերնետի վրա գոյություն ունեցող հակառասիստական նախաձեռնությունները, ինչպես նաև ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարին նվիրված նոր սայթերի ստեղծումը,

- բացահայտել ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի տեղեկությունների տարածման համար պատասխանատու սայթերի հրատարակիչներին և ինտերնետի մուտքն ապահովողներին՝ յուրաքանչյուրի տեխնիկական գործառույթին համապատասխան,

- սատարել ցանցում ռասիզմի, օտարատյացության, և հակասեմիտիզմի դեմ պայքարի նպատակով ինտերնետի ինդուստրիայի կողմից ձեռնարկված ինքնակարգապահական միջոցառումները, ինչպես օրինակ, »ռասիզմի դեմ թեժ գծերը«, վարքագծի կանոնները և ֆիլտրող ծրագրային ապահովումները, ինչպես նաև քաջալերել այս բնագավառում իրականացվող հետազոտությունները,

- լայն հասարակության ուշադրությունը հրավիրել ինտերնետով ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական բնույթի նյութերի տարածման հիմնախնդրի վրա, հատկապես կարևորելով ինտերնետից օգտվող պատանիների և երիտասարդների և առաջին հերթին երեխաների դաստիարակությունը, նրանց բացատրելով, որ կարող են հանդիպել ռասիստական, օտարատյաց և հակասեմիտական սայթերի և թե ինչ պոտենցիալ վտանգների հետ են դրանք կապված.